ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28.
Հեռ. (374 10) 59 00 01, Ֆաքս (374 10) 56 05 28
էլ.փոստ mintranscom@mtc.am

N ----------

<<------->>---------- 2011թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2011 թվականի հունվարի 17-ի թիվ 02/23.4/278-11 հանձնարարականի՝ <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունեմ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2011 թվականի հունվարի 11-ի թիվ 01/16.1/19-10 գրությամբ օրենքների նախագծերի վերաբերյալ արդեն իսկ ներկայացվել է կարծիք ՀՀ կենտրոնական բանկ:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տեղեկատվայնացման վարչություն
590066

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

"....." ..... 2011թ. N.....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ պրն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2011 թվականի հունվարի 17-ի թիվ 02/23.4/278-11 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը <էլեկտրոնային հաղորդակցության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին> և <Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 583 841
Fax:(37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.՝ (37410) 583 841
Ֆաքս՝ (37410) 565 496

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

30.12.2010 N 15.1-04/1171-10

Ձեր N

Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի նիստում հաստատված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» 6.1 կետը՝ Ձեզ ենք ներկայացնում ««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Միաժամանակ նշենք, որ Նախագծերը ներկայացրել ենք շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների կարծիքին: Նշված մարմիններից նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ ստանալուց հետո կներկայացնենք այդ մարմինների առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակված Նախագծերը և առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը:

Կից՝

1. ««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին»

52. 079-217

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը՝ 2 էջ.

2. Նախագծերի վերաբերյալ հիմնավորումը, տեղեկանքները՝ 4 էջ.

3. Մեկ մագնիսական կրիչ:

Հարգանքով՝ Արթուր Ջավադյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176-Ն օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ՝

«2.1) «Վարկային տեղեկատվության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային բյուրոներին.».

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ձևավորված <<Վարկային տեղեկատվության և վարկային բյուրոների գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային տեղեկատվության վրա (օպերատորը և ծառայություններ մատուցողները վարկային բյուրոներին կարող են տրամադրել միայն սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ձևավորված «Վարկային տեղեկատվության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային տեղեկատվություն):

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասում՝

1) «ինչպես նաև» բառերը հանել, իսկ «նույնականացնող» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ըստ գործունեության ոլորտի (գործունեության տեսակի) վարկային տեղեկատվություն տրամադրողների վերաբերյալ» բառերը:
2) Լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Վարկային զեկույցում ներառվող տվյալների ցանկը կարող է սահմանվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման

Նախագծերի ներկայացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի նիստում հաստատված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» 6.1 կետը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետություն վարկային պատմության ձևավորման և զարգացման հարամ օրենսդրական խոչընդոտների վերացման վերաբերյալ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) առաջարկությամբ:

Խնդիրը կայանում է նրանում, որ ««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածն արգելում է հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորներին իրենց հաճախորդների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել այլ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի (նշված դեպքերի մեջ վարկային բյուրոներին տրամադրման դեպքը նախատեսված չէ):

Փոփոխության արդյունքում նշված սուբյեկտներն իրավունք կունենան իրենց հաճախորդների պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել վարկային բյուրոներին: Սակայն այդ տեղեկատվության տրամադրումը չի հանդիսանում վարկային բյուրոյին պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվություն: Այսինքն՝ այդ տեղեկատվության տրամադրումը հնարավոր է վարկային բյուրոյի և հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների միջև ձեռք բերված համաձայնության արդյունքում՝ հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների կողմից իրենց հաճախորդներին նախապես տեղեկացելով, որ իրենց վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է, որ տրամադրվի վարկային բյուրոյին:

««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո վարկային բյուրոն պարտավոր է վարկային զեկույցում ընդգրկել տեղեկատվություն այն մասին, թե որ տիպի սուբյեկտից ստացված տվյալների արդյունքում է ձևավորվել վարկային բյուրոյում առկա տեղեկությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսուհետ վարկային բյուրոն հավաքագրելու է ոչ միայն ֆինանսական կազմակերպությունների, այլ նաև այլ սուբյեկտերի հաճախորդների վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն՝

վարկային զեկույցում վարկային բյուրոն պետք է նշի, որ տվյալ տեղեկատվությունը ձևավորվել է բանկերից, վարկային կազմակերպություններից կամ օրինակ կոմունալ ծառայություններ մատուցող սուբյեկտներից ստացված տեղեկատվության հիման վրա: Իսկ անհրաժեշտության դեպքում վարկային զեկույցում ներառվող տվյալների ցանկը կսահմանի ՀՀ կենտրոնական բանկը՝ ապահովելու բոլոր բյուրոների կողմից վարկային զեկույցների միատեսակ ձևն ու բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ / Արթուր Ջավադյան

ՏԵՂԵԿԱՆՔ

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունելու կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման դեպքում պետության եկամուտների նվազեցում և ծախսերի ավելացում տեղի չի ունենա:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ /**Արթուր Ջավադյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունելու կապակցությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ /**Արթուր Ջավադյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2011 թ. N

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պարոն Արթուր Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Ձեզ եմ ներկայացնում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կարծիքները: Առաջարկում եմ քննարկել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել նախագծերի լրամշակված տարբերակները, ինչպես նաև նախագծերը ներկայացնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 և 28-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածներով նախատեսված պահանջներին համապատասխան:

Առդիր՝ 16 թերթ:

Հարգանքով՝ /Դավիթ Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minfin@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

_____ № _____

Ձեր № _____

ՀՀ Կառավարության
աշխատակազմի ղեկավար
պրն. Դ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 17.01.2011թ. թիվ 02/23.4/278-11 հանձնարարականի՝ <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ, հայտնում ենք, որ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Միաժամանակ նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունն իր դիրքորոշումը 30.12.2010թ. թիվ 12/4Ֆ-4-4408 և 19.01.2011թ. թիվ 12/4Ֆ-4-97 գրություններով ներկայացրել է ՀՀ Կենտրոնական բանկ:

Հարգանքով՝

Վ. Գաբրիելյան

Կատ.՝ Ֆինանսական շուկայի զարգացման վարչություն
Հեռ.՝ 59-51-56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 02/23.4/278-11
17.01.2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 17.01.2011 թվականի թիվ 02/23.4/278-11 հանձնարարականի՝ հայտնում եմ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առարկությունները և առաջարկությունները 18.01.2010 թվականի թիվ 16.31/119-11 գրությամբ (կցվում է) ներկայացրել է ՀՀ կենտրոնական բանկին:

Մասնավորապես առաջարկվել է ձեռնարկել միջոցառումներ կոմունալ-կենցաղային ծառայություններ (գազի մատակարարում, էլեկտրաէներգիայի մատակարարում, ջրամատակարարում և ջրահեռացում) մատուցող ընկերությունների կողմից «ԱՔՌԱ» վարկային բյուրոյին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումն ապահովելու համար:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

/ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Կատարող՝ Կորյուն Գևորգյան
56-61-98 (249)

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐԶԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ 1-ին և 2-րդ հոդվածներում անհրաժեշտ է ճիշտ նշել Օրենքի վերնագիրը, մասնավորապես՝ «տեղեկատվության» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «շրջանառության» բառը:

2. Նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակման» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «պաշտոնական» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

3. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը, քանի որ նախագծի տեքստում նախատեսված է նաև փոփոխություն:

4. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի բովանդակությունն անհրաժեշտ է նախատեսել հստակ, մասնավորապես՝ «կարող է սահմանվել» բառերն անհրաժեշտ է փոխարինել «սահմանվում է» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ոճն իմպերատիվ-հրամայական ու պաշտոնական է:

5. Միաժամանակ հայտնում ենք, որ օրենքների նախագծերն անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ անհրաժեշտ է ներկայացնել նաև ազդեցության գնահատողներից ստացված եզրակացությունները:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

N_____
« »_____20 թ.

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար
պրն Դ. Սարգսյանին
Պատճենը՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
պրն Ա. Ջավադյանին

ՀՀ վարչապետի 17.01.2011թ. N02/23.4/278-11
հանձնարարականի կապակցությամբ

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ կենտրոնական բանկի կողմից շրջանառության մեջ դրված «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը առաջարկություններ չունի:

Ա. Մովսիսյան

52-65-73

ՀՀ, Երևան0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2, հեռ.(37410)521 964, ֆաքս(37410)526 365

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Պարոն Դ. Սարգսյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011 թվականի
հունվարի 17-ի, 02/23.4/278-11 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Սարգսյան,

Կից ներկայացնում ենք «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եզրակացությունը:

Հարգանքով՝ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ն. Սարգսյան